ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/42

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Ազդ» ՍՊԸ-ի կողմից 17.03.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/42 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ազդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ազդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 17.03.2018թ. բողոքով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ): Սույն մրցույթով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2018թ. մարտի 19-ը, ժամը 10:00-ն:

Մրցույթի առարկան է հանդիսանում.

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչություն
1	1. Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառումներ
2	2.Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա առթիվ միջոցառումներ
3	3.«Ջազի միջազգային օրվան» նվիրված միջոցառումներ
4	4.«Վերջին զանգ» մշակութային միջոցառման կազմակերպում
5	5.«Երեխաների իրավունքի պաշտպանության միջազգային օրվան» նվիրված միջոցառումներ
6	6.Արամ Խաչատրյանին նվիրված միջոցառումներ
7	7.մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ
	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն
8	8. Երևանյան ամառ միջոցառման կազմակերպման ծառայություններ

Համաձայն մրցույթի հրավերի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի», սահմանվել է հետևյալը՝

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չ/հ	***գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)***	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	նդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչություն						
1	79951100/231	«Մայրության և գեղեցկության տոնին նվիրված՝ Երևան քաղաքի փոքր կենտրոնի բանուկ հատվածների ***3 հարթակներում***	դրամ		1	Ք. Երևան	Մինչև ապրիլի 7-ը

		հատվածները համաձայնեցնելով պատվիրատուի հետ, կազմակերպել երևանյան ֆոլկլոր ժանրի համերգային ծրագրեր յուրաքանչյուր հարթակում առնվազն 2,5 ժամ տևողությամբ, կենդանի նվագակցությամբ համույթների, բենդերի և/կամ զուգահեռ անհատ կատարողների մասնակցությամբ /***մասնակիցների ցանկը և ելույթները անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ***/: Վերջիններիս իրականացման համար ըստ համերգային ծրագրերի մասնակիցների կողմից առաջադրվող տեխնիկական պայմանների և ընտրված տարածքի ակուստիկ հնչեղության, ռելիեֆի ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /նվազագույնը 6 մետր X 6 մետր X 0.5 մետր չափսերով/, կենդանի կատարումների և նախապես ընտրված և ***պատվիրատուի հետ համաձայնեցված հարթակներում*** /տեղանքի/ համապատասխան հնչեղությունն ապահովելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր հարթակում 4-8 կվտ հզորության ձայնային սարքավորումներ իրենց համապատասխան միկրոֆոններով, որոնք պետք է բավարարեն համույթների փողային, լարային, ստեղնաշարային, հարվածային գործիքների և երգիչ մասնակիցների ելույթների և կատարումների իրականացման համար: Հնչյունային սարքավորումները պետք է բաղկացած լինեն երաժիշտների և երգիչների լսելիությունը /մոնիտորներ/ ապահովելու համար: Բոլոր հարթակներում անհրաժեշտ է հնչյունային սարքավորումների ձայնի ղեկավարման վահանակ՝ առնվազն 16 մուտքով և 6 ելքով: Բոլոր ընտրված հարտակներում, հնչյունային սարքավորումները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության եռաֆազ էլեկտրաէներգիայի սնուցման կետ, որը պետք է մոնտաժվի բեմահարթակներից մեկ մետր ոչ ավել հեռավորությամբ:					
2	79951100 /231	Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա առթիվ՝ Կիևյան կամուրջից դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր տանող այգու ճանապարհների երկայնքով տեղադրված սյուների հոսանքագծերի ստուգում, վնասված հատվածների վերանորոգում (կամ երկար վնասված հատվածներ որտեղ պետք է անցկացնել արտաքին գծեր): 1-ին ճանապարհը տեղակայված է թանգարանի հարակից տարացքով մինչև եղևնիների հրապարակ, կապի կենտրոնից ընդհանուր երկարությամբ մոտ 400 մ: 2-րդ ճանապարհը եղևնիների հրապարակից մինչև ոլորան դեպի մարզահամերգային համալիր գնացող	դրամ		1	Ք. Երևան	մինչև ապրիլի 24-ը

		ճանապարհ, կապի կենտրոնից մոտ 700 մ: 3-րդ և 4- րդ գծերը ապահովում են մարզահամերգային համալիրի դիմացից դեպի եղևնիների հրապարակ թեքվող ոլորանը: 3-րդ գծի երկարությունը կապի կենտրոնից 1600 մ: 4-րդի երկարությունը կապի կենտրոնից մոտ 2200 մ: Կապի կենտրոնից դեպի հուշահամալիրի հարակից տարացքում տեղակայված ժամանակավոր ձայնային սպասարկման կայան ձայնային գծի անցկացում մոտ 160մ : Հոսանքի ենթակայանից դեպի ժամանակավոր ձայնային սպասարկման կայան եռաֆազ հոսանքագծի մալուխի անցկացում մոտ 100 մ: Ճանապարհների երկայնքով տեղադրված սյուների վրա (60-70) հատ (30-70 վտ 220վ) բարձրախոսերի մոնտաժում, փորձարկում և 25.04.2017թ-ից ապամոնտաժում: Հիմնական բարձրախոսերի 25 կվտ, տարբեր շեղման անկյուններով տեղադրում: Երգչախմբերի միկրոֆոններին գնացող գծերի անցկացում: Տրանսլացիոն գծերի անցկացում դեպի հեռուստակայաններ, փորձարկում: Հիմնական բարձրախոսեր - 16 հատ, ուժեղացուցիչ-8 հատ, միկշերային վահանակ-1 հատ, միկրոֆոն-4-6 հատ, միկրոֆոնի շտատիվ-4-6 հատ, եռաֆազ հոսանքի անցկացում և բաժանում հեռուստակայանների միջև: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հարակից հարթակում /խորանի հարևանությամբ/ անհրաժեշտ է կազմակերպել օրվա խորհրդին համահունչ երգերի կատարմամբ ծրագիր, առնվազն 50 հոգուց բաղկացած երգչախմբի մասնակցությամբ, մասնակից երգչախմբի տեկնածությունը և կատարումները նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ:					
3	79951100 /231	«Ջազի միջազգային օրվան» նվիրված ***<u>Կասկադի հարակից /«Գաֆեսճյան արվեստի կենտրոն»/ տարածքում</u>*** կազմակերպել կենդանի նվագակցությամբ համերգային ծրագիր առնվազն 3 ժամ տևողությամբ, ***<u>երևանյան հայտնի ջազ խմբերի և անհատ կատարողների մասնակցությամբ, /մասնակիցների ցանկը համաձայնեցնելով պատվիրատուի հետ/:</u>*** Վերջինիս իրականացման համար ըստ համերգային ծրագրի մասնակիցների կողմից առաջադրվող տեխնիկական պայմանների ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /նվազագույնը՝ 10 մետր լայնություն, 8 մետր խորություն և 1 մետր բարձրություն չափսերով/, ֆերմաներ՝ 12 մետր լայնություն, 10 մետր խորություն և 7,5 մետր բարձրություն չափսերով, բեմի ծածկ	դրամ		1	Ք. Երևան	մինչև ապրիլի 30-ը

		ֆերմաների չափերին համապատասխան, կենդանի կատարումների և տեղայնքին համապատասխան հնչեղությունն ապահովելու համար ձայնային / ընդհանուր 15-25 կվտ հզորությամբ ինչպես նաև բարձրախոսներ նախատեսված բեմի, մասնավորապես երգիչների և երաժիշտների համար, ապահովել տեխնիկական բոլոր պահանջները նախապես համաձայնեցրած լինելով բոլոր մասնակիցների տեխնիկական պահանջների հետ/ , լուսային / ընդհանուր գունային դինամիկ լուսավորություն ընդգծված լույսերի ուղեկցությամբ ինչպես նաև լուսավորություն նկարահանման համար/ և կենդանի նվագակցության համար այլ անհրաժեշտ սարքավորումներ, երաժշտական գործիքներ: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը 3 ֆազի համակարգով:					
4	79951100 /231	«Վերջին զանգ» մշակութային միջոցառման կազմակերպում՝ ***Ազատության հրապարակում*** հայտնի էստրադային երգիչ կատարողների, դի ջեյների մասնակցությամբ /***մասնակիցների ցանկը և կատարումները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ*** /համերգային ծրագիր 3 ժամ տևողությամբ: Վերջինիս իրականացման համար ըստ համերգային ծրագրի մասնակիցների կողմից առաջադրվող տեխնիկական պայմանների ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /Նվազագույնը՝ 9 մետր լայնություն, 8 մետր խորություն և 1 մետր բարձրություն չափերով/, ֆերմաներ՝ 10 մետր լայնություն, 9 մետր խորություն և 8 մետր բարձրություն չափերով, բեմի ծածկ ֆերմաների չափերին համապատասխան, Ազատության հրապարակում համապատասխան հնչեղությունն ապահովելու համար ձայնային առնվազն 40 կվտ հզորությամբ ներառելով բեմի համար նախատեսված բառձրախոսներ ապահովելով երգիչների և երաժիշտների բոլոր տեխնիկական պահանջները նախապես հաստատված կարգով, նվազագույնը 50 միավոր՝ լուսային սարքավորումներ որոնցում ներառված կլինեն դինամիկ գունային, հատուկ ընգծված լուսային էֆեկտներ ԼԷԴ էկրաններ ըստ նախապես համաձայնեցված պլանով և կառուցվացքով և այլ անհրաժեշտ սարքավորումներ: Ըստ մասնակիցների կողմից առաջադրված տեխնիկակական պայմանների նաև երաժշտական գործիքներ: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը բեմահարթակից մեկ մետր ոչ ավել	դրամ		1	Ք. Երևան	մինչև մայիսի 27-ը

		հեռավորությամբ 3 ֆազ առնվազն 40 կվտ հզորությամբ: Հրավառության իրականացում նվազագույնը 1.0 րոպե տևողությամբ:					
5	79951100 /231	«Երեխաների իրավունքի պաշտպանության միջազգային օրվան» ***նվիրված Ազատության հրապարակում*** կազմակերպել մանկական համերգային ծրագիր 2 ժամ տևողությամբ՝ մանկական համույթների, անհատ կատարողների, 10-15 հեքիաթի հերոսների կերպարների, խաղավարի կամ հանդիսավարի մասնակցությամբ ***/մասնակիցների ցանկը և կատարումները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ/,*** վերջինիս իրականացման համար ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /նվազագույնը՝ 6 մետր լայնություն, 6 մետր խորություն և 1 մետր բարձրություն չափերով/, Ազատության հրապարակում համապատասխան հնչեղությունն ապահովելու համար ձայնային 30 կվտ հզորությամբ ներառելով բեմի համար նախատեսված բառձրախոսներ ապահովելով երգիչների և երաժիշտների բոլոր տեխնիկական պահանջները և այլ անհրաժեշտ սարքավորումներ: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը բեմահարթակից մեկ մետր ոչ ավել հեռավորությամբ: Մինչև համերգային ծրագրի մեկնարկը կազմակերպել կավճանկարչություն Ազատության հրապարակում հանդիսատես երեխաների մասնակցությամբ, կավճանկարչության համար անհրաժեշտ քանակությամբ տարբեր գույների կավիճների ապահովում՝ առնվազն 700 հատ:	դրամ		1	Ք. Երևան	մինչև հունիսի 1-ը
6	79951100 /231	Արամ Խաչատրյանի անվան տուն–թանգարանում կազմակերպել համերգային ծրագիր երաժշտական և արվեստի դպրոցների սաների մասնակցությամբ և Ա. Խաչատրյանի ստեղծագործությունների կատարմամբ: ***Ծրագիրը պետք է նախապես մշակել և համաձայնեցնել պատվիրատուի հետ:*** Վերջինիս իրականացման համար անհրաժեշտ ձայնային, լուսային և մասնակիցների ելույթների համար անհրաժեշտ այլ սարքավորումների ապահովում: Արամ Խաչատրյանի անվան տուն–թանգարանից Կոմիտասի անվան քաղաքային պանթեոն և հակառակ ուղղությամբ երթուղով շուրջ 30 հոգի տեղափոխման համար տրանսպորտային միջոցի ապահովում: Մեկ ծաղկեպսակի և 60 հատ սպիտակ մեխակների ձեռք բերում:	դրամ		1	Ք. Երևան	մինչև հունիսի 6-ը
7	79951100	Կազմակերպել Երևան քաղաքի	դրամ		1	Ք.	մինչև

	/231	երաժշտական և արվեստի դպրոցներում շնորհալի սաների, համույթների, երգչախմբերի, անհատ երգիչ կատարողների ստուգատես-մրցույթ՝ ըստ առանձին բաժինների, վերջինիս գնահատման նպատակով մասնագիտական խմբի ձևավորում: Յուրաքանչյուր բաժնի կամ անվանակարգի ստուգատեսը անցկացվում է մեկ օր, նախապես ընտրված և պատվիրատուի հետ համաձայնեցված դահլիճում, յուրաքանչյուր անվանակարգի ստուգատեսին անհրաժեշտ է ապահովել ձևավորված մասնագիտական խմբի ներկայությունը տվյալ անվանակարգին մասնակցող երեխաների գնահատման համար: Ստուգատեսն անցկացվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության կողմից հաստատված կարգի համապատասխան: Ա. Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիայի մեծ համերգասրահում կազմակերպել մեկ ժամ երեսուն րոպե տևողությամբ համերգային ծրագիր՝ անցկացրած ստուգատեսի արդյունքում ի հայտ եկած շնորհալի սաների մասնակցությամբ, ապահովել վերը նշված համերգասրահը 2 օրվա համար, առաջին օրը փորձեր անցկացնելու , երկրորդ օրը համերգային ծրագրի իրականացման նպատակով: Ստուգատես-մրցույթի անցկացման ընթացքում ի հայտ եկած լավագույն սաներ ներկայացնող առաջին երեք դպրոցներին յուրաքանչյուրին մեկական օրինակով պարգևատրել խորհրդանշական արծանիկներով: Վերջինիս իրականացման համար ըստ մասնակիցների ելույթների անհրաժեշտության ապահովել ձայնային և լուսային, այլ սարքավորումներով: Համերգասրահի բեմի դիմային հատվածը ձևավորել բնական ծաղկե շղթայով:				Երևան	հունիսի 30-ը
	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն						
8	79951100 /232	2000 քմ ***<u>գովազդային պաստառների տպագրություն և տեղադրում գովազդային վահանակներին, միջոցառումների բեմահարթակներին և այլ վայրերում</u>***: 1000գմ փուչիկներով ձևավորման ծառայություններ "Երևանյան Ամառ" խորագրով 400 հատ, 0.9-2.1 չափի դրոշների և 50քմ պրոմո նյութերի տպագրության ծառայություններ: 20000 հատ Ա4 չափի բուկլետների տպագրություն և բաժանում: ***<u>Կարապի լճում</u>*** ֆիլմերի, համերգների ցուցադրման համար մետաղական հենքերով 35-40քմ էկրանի պատրաստում և տեղադրում, թեմատիկ ֆիլմերի ցուցադրում յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին:	դրամ			Ք. Երևան	2018թ. Հունիսի 1-ից մինչև օգոստոսի 31-ը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, ինչ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Ընկերությունը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից սույն մրցույթի հրավերը, մասնավորապես՝ 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը կազմելիս՝ թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի պահանջների խախտում:

Մասնավորապես, նշված չափաբաժինների համար ներկայացված գնման առարկայի բնութագրերը ներկայացված չեն ամբողջական, բացակայում են մատուցվող ծառայությունների հստակ նկարագրությունը, դրանք ներկայացված չեն բավարար ճշտությամբ, որը հնարավորություն չի տալիս մասնակիցներին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան, ինչն էլ իր հերթին բարդեցնում է առաջարկվող ծառայության գնի որոշումը, իսկ հետագայում նաև պայմանագրային պարտավորությունների կատարումը:

Այսպես.

1. Հրավերի տեխնիկական բնութագրից անհասկանալի է, թե նշված վայրի կոնկրետ որ հատվածում պետք է տեղադրվի բեմահարթակը: Օրինակ, 1-ին չափաբաժնի համար նշված է՝ Երևան քաղաքի փոքր կենտրոնի բանուկ հատվածների 3 հարթակներում՝ հատվածները համաձայնեցնելով պատվիրատուի հետ, 3-րդ չափաբաժին՝ Կասկադի հարակից («Գաֆեսճյան արվեստի կենտրոն») տարածքում, 4-րդ և 5-րդ չափաբաժիններ՝ Ազատության հրապարակում, 8-րդ չափաբաժնում՝ գովազդային պաստառների տպագրություն և տեղադրում գովազդային վահանակներին, միջոցառումների բեմահարթակներին և այլ վայրերում, Կարապի լճում: Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ պատվիրատուի կողմից բեմահարթակի հստակ տեղակայման վայրի մասին կատարողին ուշ տեղեկություն տրամադրելը (քանզի նշված չէ ոչ հստակ տեղակայման վայր, կամ վայրը բեմահարթակը տեղադրելուց առաջ տեղեկության ներկայացման ժամկետը) կարող է հարցականի տակ դնել պայմանագրի պատշաճ կատարումը:

2. Հստակ նշված չէ, թե բեմահարթակ տեղադրելու թույլատվությունը ով պետք է ձեռք բերի, կատարողը, թե այն պետք է տրամադրվի պատվիրատուի կողմից և ինչ ժամկետում

բեմը պատրաստելուց ինչքան ժամկետ առաջ (օրինակ, Կասկադի հարակից («Գաֆեսճյան արվեստի կենտրոն») տարածքում):

3. Տարակերպ մեկնաբանությունների տեղիք կարող է տալ, թե ինչ պետք է հասկանալ «հայտնի» երգիչ ասելով (3-րդ չափաբաժին), ինչ չափանիշով պետք է գնահատվի կատարողի հայտնի լինելու հանգամանքը (երգիչը կարող է լինել հայտնի մի զանգված ունկնդրի համար և ոչ հայտնի մեկ այլի համար):

4. Բացարձակ սուբյեկտիվ է տեխնիկական բնութագրերում ամրագրված հետևյալ արտահայտությունը՝ «մասնակիցների ցանկը և ելույթները անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ», քանզի նման ձևակերպման պայմաններում ցանկացած կատարող և ելույթ կարող են չընդունվել պատվիրատուի կողմից՝ նման ոչ հստակ ձևակերպման պայմաններում, քանզի չկա պատվիրատուի համար ընդունելի կատարողների և կատարումների ցանկ, որով ղեկավարվելով՝ ծառայություն մատուցողը կարող է կազմակերպել միջոցառում: Բացի այդ, նման աբստրակտ ձևակերպման պայմաններում անհնարին կամ առնվազն դժվար է ներկայացնել ճիշտ հաշվարկված գնային առաջարկ:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ Խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Հաշվի առնելով, որ սույն մրցույթով հայտերի ներկայացման ժամկետը դեռևս ավարտված չէ (սահմանված է մարտի 19, ժամը 10:00-ն), ուստի ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության պահանջներով՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների

կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել նշված մրցույթը՝ 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը 22.03.2018թ. ներկայացրել է գրություն, որով հայտնել է, որ ներկայացված բողոքով տեխնիկական վրիպակի պատճառով Ընկերությունը վիճարկել է 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինները, այնինչ Ընկերությունը ցանկանում է վիճարկել 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինները (այսինքն 3-րդ չափաբաժնի փոխարեն սխալմամբ նշվել է 2-րդ չափաբաժինը):

Միևնույն ժամանակ «ԱԶԴ» ՍՊԸ-ն սույն գրությամբ ցանկանում է կատարել բողոքի պահանջի լրացում:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է հիմք ընդունել վերը նշված գրությունը և «ԱԶԴ» ՍՊԸ-ի կողմից 17.03.2018թ. ներկայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/42 բողոքի պահանջը շարադրել է հետևյալ բովանդակությամբ.

պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ չկայացած հայտարարել Մրցույթը՝ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով կամ պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել նշված մրցույթի հրավերով սահմանված «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը»՝ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով՝ համապատասխանեցնելով այն գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

«Ազդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 20.03.2018թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցություն, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Երևանի քաղաքապետարանը Խորհրդին ուղղված 20.03.2018թ. թիվ 02/61-19254Հ գրությամբ հայտնել է հետևյալ.

1-ին չափաբաժնում նկարագրված փոքր կենտրոնի բանուկ հատվածի 3 հարթակներում բեմահարթակների տեղադրման մասով կոնկրետ վայրերը չի մատնանշվել հաշվի առնելով ապրիլի 7-ին այլ կազմակերպությունների կողմից նույնպես միջոցառումներ կամ հավաքներ իրականացնելու կանխատեսումը, որի արդյունքում բնութագրում պահանջվել է համաձայնեցնել պատվիրատուի հետ: Միաժամանակ՝ կատարողի կողմից առանց պատվիրատուի հետ համաձայնեցման վայրի (հատվածի) ընտրությունը կարող է հանգեցնել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 56.1-րդ հոդվածի 12-րդ կետով սահմանված դրույթների խախտմանը:

Բեմահարթակ տեղադրելու թույլտվության մասին տեխնիկական բնութագրով չպահանջելը ենթադրում է, որ նշված կամ համաձայնեցված վայրում հարթակի տեղադրման թույլտվության հետ կատարողը գործառույթ չունի:

Հայտնի երգիչ կատարողների հայտնիությանը որոշելու մասով տեղեկացնում եմ, որ ՀՀ օրենսդրությամբ բացակայում է նման չափորոշիչ կամ սահմանում, հետևաբար հայտնի կատարող է համարվում հեռուստատեսությամբ, ռադիոյով այլ զանգվածային միջոցներով երգերի կամ երաժշտական կատարումների արդյունքում հանրությունում հայտնություն կամ ճանաչելիություն ձեռքբերած կատարող, որը մեկ բառով բնութագրվել է որպես հայտնի կատարող կամ կատարողներ, ուստի բնութագրում նշված է մասնակիցների ցանկը և ելույթները համաձայնեցնել պատվիրատուի հետ, այսինքն պատվիրատուն կատարողի հետ համատեղ է քննարկում մասնակիցների ցանկը, ինչպես նաև ելույթները: Հակառակ դեպքում՝ կատարողի կողմից նախատեսված կամ ընդգրկած ցանկացած կատարող, այդ թվում ոչ պրոֆեսիոնալ մակարդակի կիանգեցնի անորակ, անճաշակ կատարումներով մշակութային միջացառման իրականացմանը: Արդյունքում մայրաքաղաքի բնակիչներին և մայրաքաղաք ժամանած հյուրերին կմատուցվի ցածրորակ ճաշակի մշակույթ:

Միաժամանակ՝ կատարողներին ցանկով ներկայացնելը ենթադրում է հստակ կատարողների անուն ազգանուններ (մատնանշում), իսկ համարժեք բառով բնութագրելը՝ երգիչների կամ երաժիշտների դեպքում անհնարին է դարձնում գնման առարկան, ինչպես նաև հակասում է ՀՀ գնումների օրենսդրության պահանջներին:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 20.03.2018թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/42 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/42 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտարարությունը և հրավերը սահմանված կարգով հրապարակվել է www.procurement.am տեղեկագրում:

2. Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 19.03.2018թ. ժամը 10:00-ն:

3. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը.

Ծառայության							
հրավերով նախատեսված չ/հ	*գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)*	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչություն						
1	79951100/231	«Մայրության և գեղեցկության տոնին նվիրված՝ Երևան քաղաքի փոքր կենտրոնի բանուկ հատվածների 3 հարթակներում՝ հատվածները համաձայնեցնելով պատվիրատուի հետ, կազմակերպել երևանյան ֆոլկլոր ժանրի համերգային ծրագրեր յուրաքանչյուր	դրամ		1	Ք. Երևան	մինչև ապրիլի 7-ը

		հարթակում առնվազն 2,5 ժամ տևողությամբ, կենդանի նվագակցությամբ համույթների, բենդերի և/կամ զուգահեռ անհատ կատարողների մասնակցությամբ /մասնակիցների ցանկը և ելույթները անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ/: Վերջիններիս իրականացման համար ըստ համերգային ծրագրերի մասնակիցների կողմից առաջադրվող տեխնիկական պայմանների և ընտրված տարածքի ակուստիկ հնչեղության, ռելիեֆի ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /նվազագույնը 6 մետր X 6 մետր X 0.5 մետր չափսերով/, կենդանի կատարումների և նախապես ընտրված և պատվիրատուի հետ համաձայնեցված հարթակներում /տեղանքի/ համապատասխան հնչեղությունն ապահովելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր հարթակում 4-8 կվտ հզորության ձայնային սարքավորումներ իրենց համապատասխան միկրոֆոններով, որոնք պետք է բավարարեն համույթների փողային, լարային, ստեղնաշարային, հարվածային գործիքների և երգիչ մասնակիցների ելույթների և կատարումների իրականացման համար: Հնչյունային սարքավորումները պետք է բաղկացած լինեն երաժիշտների և երգիչների լսելիությունը /մոնիտորներ/ ապահովելու համար: Բոլոր հարթակներում անհրաժեշտ է հնչյունային սարքավորումների ձայնի ղեկավարման վահանակ՝ առնվազն 16 մուտքով և 6 ելքով: Բոլոր ընտրված հարտակներում, հնչյունային սարքավորումները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության եռաֆազ էլեկտրաէներգիայի սնուցման կետ, որը պետք է մոնտաժվի բեմահարթակներից մեկ մետր ոչ ավել հեռավորությամբ:					
2	79951100/231	Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա առթիվ՝ Կիևյան կամուրջից դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր տանող այգու ճանապարհների երկայնքով տեղադրված սյուների հոսանքագծերի ստուգում, վնասված հատվածների վերանորոգում (կամ երկար վնասված հատվածներ որտեղ պետք է անցկացնել արտաքին գծեր): 1-ին ճանապարհը	դրամ		1	Ք. Երևան	մինչև ապրիլի 24-ը

		տեղակայված է թանգարանի հարակից տարածքով մինչև եղևնիների հրապարակ, կապի կենտրոնից ընդհանուր երկարությամբ մոտ 400 մ: 2-րդ ճանապարհը եղևնիների հրապարակից մինչև ոլորան դեպի մարզահամերգային համալիր գնացող ճանապարհ, կապի կենտրոնից մոտ 700 մ: 3-րդ և 4- րդ գծերը ապահովում են մարզահամերգային համալիրի դիմացից դեպի եղևնիների հրապարակ թեքվող ոլորանը: 3-րդ գծի երկարությունը կապի կենտրոնից 1600 մ: 4-րդի երկարությունը կապի կենտրոնից մոտ 2200 մ: Կապի կենտրոնից դեպի հուշահամալիրի հարակից տարածքում տեղակայված ժամանակավոր ձայնային սպասարկման կայան ձայնային գծի անցկացում մոտ 160մ : Հոսանքի ենթակայանից դեպի ժամանակավոր ձայնային սպասարկման կայան եռաֆազ հոսանքագծի մալուխի անցկացում մոտ 100 մ: Ճանապարհների երկայնքով տեղադրված սյուների վրա (60-70) հատ (30-70 վտ 220վ) բարձրախոսերի մոնտաժում, փորձարկում և 25.04.2017թ-ից ապամոնտաժում: Հիմնական բարձրախոսերի 25 կվտ, տարբեր շեղման անկյուններով տեղադրում: Երգչախմբերի միկրոֆոններին գնացող գծերի անցկացում: Տրանսլացիոն գծերի անցկացում դեպի հեռուստակայաններ, փորձարկում: Հիմնական բարձրախոսեր - 16 հատ, ուժեղացուցիչ-8 հատ, միկշերային վահանակ–1 հատ, միկրոֆոն-4-6 հատ, միկրոֆոնի շտատիվ-4-6 հատ, եռաֆազ հոսանքի անցկացում և բաժանում հեռուստակայանների միջև: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հարակից հարթակում /խորանի հարևանությամբ/ անհրաժեշտ է կազմակերպել օրվա խորհրդին համահունչ երգերի կատարմամբ ծրագիր, առնվազն 50 հոգուց բաղկացած երգչախմբի մասնակցությամբ, մասնակից երգչախմբի տեկնածությունը և կատարումները նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ:					
3	79951100/231	«Ջազի միջազգային օրվան» նվիրված	դրամ		1	Ք.	մինչև

		Կասկադի հարակից /«Գաֆեսճյան արվեստի կենտրոն»/ տարածքում կազմակերպել կենդանի նվագակցությամբ համերգային ծրագիր առնվազն 3 ժամ տևողությամբ, երևանյան հայտնի ջազ խմբերի և անհատ կատարողների մասնակցությամբ, /մասնակիցների ցանկը համաձայնեցնելով պատվիրատուի հետ/: Վերջինիս իրականացման համար ըստ համերգային ծրագրի մասնակիցների կողմից առաջադրվող տեխնիկական պայմանների ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /նվազագույնը՝ 10 մետր լայնություն, 8 մետր խորություն և 1 մետր բարձրություն չափսերով/, ֆերմաներ՝ 12 մետր լայնություն, 10 մետր խորություն և 7,5 մետր բարձրություն չափսերով, բեմի ծածկ ֆերմաների չափերին համապատասխան, կենդանի կատարումների և տեղայնքին համապատասխան հնչեղությունն ապահովելու համար ձայնային / ընդհանուր 15-25 կվտ հզորությամբ ինչպես նաև բարձրախոսներ նախատեսված բեմի, մասնավորապես երգիչների և երաժիշտների համար, ապահովել տեխնիկական բոլոր պահանջները նախապես համաձայնեցրած լինելով բոլոր մասնակիցների տեխնիկական պահանջների հետ/ , լուսային / ընդհանուր գունային դինամիկ լուսավորություն ընդգծված լոյսերի ուղեկցությամբ ինչպես նաև լուսավորություն նկարահանման համար/ և կենդանի նվագակցության համար այլ անհրաժեշտ սարքավորումներ, երաժշտական գործիքներ: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը 3 ֆազի համակարգով:				Երևան	ապրիլի 30-ը
4	79951100/231	«Վերջին զանգ» մշակութային միջոցառման կազմակերպում՝ Ազատության հրապարակում հայտնի էստրադային երգիչ կատարողների, դի ջեյների մասնակցությամբ /մասնակիցների ցանկը և կատարումները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ /համերգային ծրագիր 3 ժամ տևողությամբ: Վերջինիս	դրամ		1	Ք. Երևան	մինչև մայիսի 27-ը

		իրականացման համար ըստ համերգային ծրագրի մասնակիցների կողմից առաջադրվող տեխնիկական պայմանների ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /նվազագույնը՝ 9 մետր լայնություն, 8 մետր խորություն և 1 մետր բարձրություն չափերով/, ֆերմաներ՝ 10 մետր լայնություն, 9 մետր խորություն և 8 մետր բարձրություն չափերով, բեմի ծածկ ֆերմաների չափերին համապատասխան, Ազատության հրապարակում համապատասխան հնչեղությունն ապահովելու համար ձայնային առնվազն 40 կվտ հզորությամբ ներառելով բեմի համար նախատեսված բառձրախոսներ ապահովելով երգիչների և երաժիշտների բոլոր տեխնիկական պահանջները նախապես հաստատված կարգով, նվազագույնը 50 միավոր՝ լուսային սարքավորումներ որոնցում ներառված կլինեն դինամիկ գունային, հատուկ ընգծված լուսային էֆեկտներ ԼԷԴ էկրաններ ըստ նախապես համաձայնեցված պլանով և կառուցվացքով և այլ անհրաժեշտ սարքավորումներ: Ըստ մասնակիցների կողմից առաջադրված տեխնիկակական պայմանների նաև երաժշտական գործիքներ: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը բեմահարթակից մեկ մետր ոչ ավել հեռավորությամբ 3 ֆազ առնվազն 40 կվտ հզորությամբ: Հրավառության իրականացում նվազագույնը 1.0 որպե տևողությամբ:					
5	79951100/231	«Երեխաների իրավունքի պաշտպանության միջազգային օրվան» նվիրված Ազատության հրապարակում կազմակերպել մանկական համերգային ծրագիր 2 ժամ տևողությամբ՝ մանկական համույթների, անհատ կատարողների, 10-15 հեքիաթի հերոսների կերպարների, խաղավարի կամ հանդիսավարի մասնակցությամբ /մասնակիցների ցանկը և կատարումները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ/, վերջինիս իրականացման համար ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /նվազագույնը՝ 6 մետր	դրամ		1	Ք. Երևան	մինչև հունիսի 1-ը

		լայնություն, 6 մետր խորություն և 1 մետր բարձրություն չափերով/, Ազատության հրապարակում համապատասխան հնչեղությունն ապահովելու համար ձայնային 30 կվտ հզորությամբ ներառելով բեմի համար նախատեսված բառձրախոսներ ապահովելով երգիչների և երաժիշտների բոլոր տեխնիկական պահանջները և այլ անհրաժեշտ սարքավորումներ: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը բեմահարթակից մեկ մետր ոչ ավել հեռավորությամբ: Մինչև համերգային ծրագրի մեկնարկը կազմակերպել կավճանկարչություն Ազատության հրապարակում հանդիսատես երեխաների մասնակցությամբ, կավճանկարչության համար անհրաժեշտ քանակությամբ տարբեր գույների կավիճների ապահովում՝ առնվազն 700 հատ:					
6	79951100/231	Արամ Խաչատրյանի անվան տուն–թանգարանում կազմակերպել համերգային ծրագիր երաժշտական և արվեստի դպրոցների սաների մասնակցությամբ և Ա. Խաչատրյանի ստեղծագործությունների կատարմամբ: Ծրագիրը պետք է նախապես մշակել և համաձայնեցնել պատվիրատուի հետ: Վերջինիս իրականացման համար անհրաժեշտ ձայնային, լուսային և մասնակիցների ելույթների համար անհրաժեշտ այլ սարքավորումների ապահովում: Արամ Խաչատրյանի անվան տուն–թանգարանից Կոմիտասի անվան քաղաքային պանթեոն և հակառակ ուղղությամբ երթուղով շուրջ 30 հոգի տեղափոխման համար տրանսպորտային միջոցի ապահովում: Մեկ ծաղկեպսակի և 60 հատ սպիտակ մեխակների ձեռք բերում:	դրամ		1	Ք. Երևան	մինչև հունիսի 6-ը
7	79951100/231	Կազմակերպել Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցներում շնորհալի սաների, համույթների, երգչախմբերի, անհատ երգիչ կատարողների ստուգատես-մրցույթ՝ ըստ առանձին բաժինների, վերջինիս գնահատման նպատակով մասնագիտական խմբի ձևավորում: Յուրաքանչյուր բաժնի կամ անվանակարգի ստուգատեսը	դրամ		1	Ք. Երևան	մինչև հունիսի 30-ը

		անցկացվում է մեկ օր, նախապես ընտրված և պատվիրատուի հետ համաձայնեցված դահլիճում, յուրաքանչյուր անվանակարգի ստուգատեսին անհրաժեշտ է ապահովել ձևավորված մասնագիտական խմբի ներկայությունը տվյալ անվանակարգին մասնակցող երեխաների գնահատման համար: Ստուգատեսն անցկացվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության կողմից հաստատված կարգի համապատասխան: Ա. Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիայի մեծ համերգասրահում կազմակերպել մեկ ժամ երեսուն րոպե տևողությամբ համերգային ծրագիր՝ անցկացրած ստուգատեսի արդյունքում ի հայտ եկած շնորհալի սաների մասնակցությամբ, ապահովել վերը նշված համերգասրահը 2 օրվա համար, առաջին օրը փորձեր անցկացնելու , երկրորդ օրը համերգային ծրագրի իրականացման նպատակով: Ստուգատես-մրցույթի անցկացման ընթացքում ի հայտ եկած լավագույն սաներ ներկայացնող առաջին երեք դպրոցներին յուրաքանչյուրին մեկական օրինակով պարգևատրել խորհրդանշական արծանիկներով: Վերջինիս իրականացման համար ըստ մասնակիցների ելույթների անհրաժեշտության ապահովել ձայնային և լուսային, այլ սարքավորումներով: Համերգասրահի բեմի դիմային հատվածը ձևավորել բնական ծաղկե շղթայով:					
	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն						
8	79951100/232	2000 քմ գովազդային պաստառների տպագրություն և տեղադրում գովազդային վահանակներին, միջոցառումների բեմահարթակներին և այլ վայրերում: 1000գմ փուչիկներով ձևավորման ծառայություններ "Երևանյան Ամառ" խորագրով 400 հատ, 0.9-2.1 չափի դրոշների և 50քմ պրոմո նյութերի տպագրության ծառայություններ: 20000 հատ Ա4 չափի բուկլետների տպագրություն և բաժանում: Կարապի լճում ֆիլմերի, համերգների ցուցադրման համար մետաղական հենքերով 35-40քմ էկրանի պատրաստում և տեղադրում, թեմատիկ ֆիլմերի	դրամ			Ք. Երևան	2018թ. Հունիսի 1-ից մինչև օգոստոսի 31-ը

		ցուցադրում յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին:					

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ազդ» ՍՊԸ-ի 17.03.2018թ. բողոքը, Երևանի քաղաքապետարանի 20.03.2018թ. թիվ 02/61-19254Հ գրությունը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-4-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտարարությունը և հրավերը սահմանված կարգով հրապարակվել է www.procurement.am տեղեկագրում և հայտերի ներկայացման վերջնաժամկետ է նախատեսվել 19.03.2018թ. ժամը 10:00-ն:

Ընթացակարգի հրավերով նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը.

Ծառայության							
հրավերով նախատեսված չ/հ	***գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)***	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**

	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչություն						
1	79951100/231	«Մայրության և գեղեցկության տոնին նվիրված՝ Երևան քաղաքի փոքր կենտրոնի բանուկ հատվածների 3 հարթակներում՝ հատվածները համաձայնեցնելով պատվիրատուի հետ, կազմակերպել երևանյան ֆոլկլոր ժանրի համերգային ծրագրեր յուրաքանչյուր հարթակում առնվազն 2,5 ժամ տևողությամբ, կենդանի նվագակցությամբ համույթների, բենդերի և/կամ զուգահեռ անհատ կատարողների մասնակցությամբ /մասնակիցների ցանկը և ելույթները անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ/: Վերջիններիս իրականացման համար ըստ համերգային ծրագրերի մասնակիցների կողմից առաջադրվող տեխնիկական պայմանների և ընտրված տարածքի ակուստիկ հնչեղության, ռելիեֆի ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /նվազագույնը 6 մետր X 6 մետր X 0.5 մետր չափսերով/, կենդանի կատարումների և նախապես ընտրված և պատվիրատուի հետ համաձայնեցված հարթակներում /տեղանքի/ համապատասխան հնչեղությունն ապահովելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր հարթակում 4-8 կվտ հզորության ձայնային սարքավորումներ իրենց համապատասխան միկրոֆոններով, որոնք պետք է բավարարեն համույթների փողային, լարային, ստեղնաշարային, հարվածային գործիքների և երգիչ մասնակիցների ելույթների և կատարումների իրականացման համար: Հնչյունային սարքավորումները պետք է բաղկացած լինեն երաժիշտների և երգիչների լսելիությունը /մոնիտորներ/ ապահովելու համար: Բոլոր հարթակներում անհրաժեշտ է հնչյունային սարքավորումների ձայնի ղեկավարման վահանակ՝ առնվազն 16 մուտքով և 6 ելքով: Բոլոր ընտրված հարտակներում, հնչյունային սարքավորումները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության եռաֆազ էլեկտրաէներգիայի սնուցման կետ, որը պետք է մոնտաժվի բեմահարթակներից մեկ մետր ոչ ավել հեռավորությամբ:	դրամ		1	Ք. Երևան	մինչև ապրիլի 7-ը

2	79951100/231	Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա առթիվ՝ Կիևյան կամուրջից դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր տանող այգու ճանապարհների երկայնքով տեղադրված սյուների հոսանքագծերի ստուգում, վնասված հատվածների վերանորոգում (կամ երկար վնասված հատվածներ որտեղ պետք է անցկացնել արտաքին գծեր): 1-ին ճանապարհը տեղակայված է թանգարանի հարակից տարացքով մինչև եղևնիների հրապարակ, կապի կենտրոնից ընդհանուր երկարությամբ մոտ 400 մ: 2-րդ ճանապարհը եղևնիների հրապարակից մինչև ոլորան դեպի մարզահամերգային համալիր գնացող ճանապարհ, կապի կենտրոնից մոտ 700 մ: 3-րդ և 4- րդ գծերը ապահովում են մարզահամերգային համալիրի դիմացից դեպի եղևնիների հրապարակ թեքվող ոլորանը: 3-րդ գծի երկարությունը կապի կենտրոնից 1600 մ: 4-րդի երկարությունը կապի կենտրոնից մոտ 2200 մ: Կապի կենտրոնից դեպի հուշահամալիրի հարակից տարացքում տեղակայված ժամանակավոր ձայնային սպասարկման կայան ձայնային գծի անցկացում մոտ 160մ : Հոսանքի ենթակայանից դեպի ժամանակավոր ձայնային սպասարկման կայան եռաֆազ հոսանքագծի մալուխի անցկացում մոտ 100 մ: Ճանապարհների երկայնքով տեղադրված սյուների վրա (60-70) հատ (30-70 վտ 220վ) բարձրախոսերի մոնտաժում, փորձարկում և 25.04.2017թ-ից ապամոնտաժում: Հիմնական բարձրախոսերի 25 կվտ, տարբեր շեղման անկյուններով տեղադրում: Երգչախմբերի միկրոֆոններին գնացող գծերի անցկացում: Տրանսլացիոն գծերի անցկացում դեպի հեռուստակայաններ, փորձարկում: Հիմնական բարձրախոսեր - 16 հատ, ուժեղացուցիչ-8 հատ, միկշերային վահանակ–1 հատ, միկրոֆոն-4-6 հատ, միկրոֆոնի շտատիվ-4-6 հատ, եռաֆազ հոսանքի անցկացում և բաժանում հեռուստակայանների միջև: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հարակից հարթակում /խորանի	դրամ		1	Ք. Երևան	մինչև ապրիլի 24-ը

		հարևանությամբ/ անհրաժեշտ է կազմակերպել օրվա խորհրդին համահունչ երգերի կատարմամբ ծրագիր, առնվազն 50 հոգուց բաղկացած երգչախմբի մասնակցությամբ, մասնակից երգչախմբի տեկնածությունը և կատարումները նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ:					
3	79951100/231	«Ջազի միջազգային օրվան» նվիրված Կասկադի հարակից /«Գաֆեսճյան արվեստի կենտրոն»/ տարածքում կազմակերպել կենդանի նվագակցությամբ համերգային ծրագիր առնվազն 3 ժամ տևողությամբ, երևանյան հայտնի ջազ խմբերի և անհատ կատարողների մասնակցությամբ, /մասնակիցների ցանկը համաձայնեցնելով պատվիրատուի հետ/: Վերջինիս իրականացման համար ըստ համերգային ծրագրի մասնակիցների կողմից առաջադրվող տեխնիկական պայմանների ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /նվազագույնը՝ 10 մետր լայնություն, 8 մետր խորություն և 1 մետր բարձրություն չափսերով/, ֆերմաներ՝ 12 մետր լայնություն, 10 մետր խորություն և 7,5 մետր բարձրություն չափսերով, բեմի ծածկ ֆերմաների չափերին համապատասխան, կենդանի կատարումների և տեղայնքին համապատասխան հնչեղությունն ապահովելու համար ձայնային / ընդհանուր 15-25 կվտ հզորությամբ ինչպես նաև բարձրախոսներ նախատեսված բեմի, մասնավորապես երգիչների և երաժիշտների համար, ապահովել տեխնիկական բոլոր պահանջները նախապես համաձայնեցրած լինելով բոլոր մասնակիցների տեխնիկական պահանջների հետ/ , լուսային / ընդհանուր գունային դինամիկ լուսավորություն ընդգծված լույսերի ուղեկցությամբ ինչպես նաև լուսավորություն նկարահանման համար/ և կենդանի նվագակցության համար այլ անհրաժեշտ սարքավորումներ, երաժշտական գործիքներ: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը 3 ֆազի համակարգով:	դրամ		1	Ք. Երևան	մինչև ապրիլի 30-ը

4	79951100/231	«Վերջին զանգ» մշակութային միջոցառման կազմակերպում՝ Ազատության հրապարակում հայտնի էստրադային երգիչ կատարողների, դի ջեյների մասնակցությամբ /մասնակիցների ցանկը և կատարումները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ /համերգային ծրագիր 3 ժամ տևողությամբ: Վերջինիս իրականացման համար ըստ համերգային ծրագրի մասնակիցների կողմից առաջադրվող տեխնիկական պայմանների ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /նվազագույնը՝ 9 մետր լայնություն, 8 մետր խորություն և 1 մետր բարձրություն չափերով/, ֆերմաներ՝ 10 մետր լայնություն, 9 մետր խորություն և 8 մետր բարձրություն չափերով, բեմի ծածկ ֆերմաների չափերին համապատասխան, Ազատության հրապարակում համապատասխան հնչեղությունն ապահովելու համար ձայնային առնվազն 40 կվտ հզորությամբ ներառելով բեմի համար նախատեսված բառձրախոսներ ապահովելով երգիչների և երաժիշտների բոլոր տեխնիկական պահանջները նախապես հաստատված կարգով, նվազագույնը 50 միավոր՝ լուսային սարքավորումներ որոնցում ներառված կլինեն դինամիկ գունային, հատուկ ընգծված լուսային էֆեկտներ ԼԷԴ էկրաններ ըստ նախապես համաձայնեցված պլանով և կառուցվացքով և այլ անհրաժեշտ սարքավորումներ: Ըստ մասնակիցների կողմից առաջադրված տեխնիկակական պայմանների նաև երաժշտական գործիքներ: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը բեմահարթակից մեկ մետր ոչ ավել հեռավորությամբ 3 ֆազ առնվազն 40 կվտ հզորությամբ: Հրավառության իրականացում նվազագույնը 1.0 րոպե տևողությամբ:	դրամ		1	Ք. Երևան	մինչև մայիսի 27-ը
5	79951100/231	«Երեխաների իրավունքի պաշտպանության միջազգային օրվան» նվիրված Ազատության հրապարակում կազմակերպել մանկական համերգային ծրագիր 2 ժամ տևողությամբ՝ մանկական	դրամ		1	Ք. Երևան	մինչև հունիսի 1-ը

		համույթների, անհատ կատարողների, 10-15 հեքիաթի հերոսների կերպարների, խաղավարի կամ հանդիսավարի մասնակցությամբ /մասնակիցների ցանկը և կատարումները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ/, վերջինիս իրականացման համար ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /նվազագույնը՝ 6 մետր լայնություն, 6 մետր խորություն և 1 մետր բարձրություն չափերով/, Ազատության հրապարակում համապատասխան հնչեղությունն ապահովելու համար ձայնային 30 կվտ հզորությամբ ներառելով բեմի համար նախատեսված բառձրախոսներ ապահովելով երգիչների և երաժիշտների բոլոր տեխնիկական պահանջները և այլ անհրաժեշտ սարքավորումներ: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը բեմահարթակից մեկ մետր ոչ ավել հեռավորությամբ: Մինչև համերգային ծրագրի մեկնարկը կազմակերպել կավճանկարչություն Ազատության հրապարակում հանդիսատես երեխաների մասնակցությամբ, կավճանկարչության համար անհրաժեշտ քանակությամբ տարբեր գույների կավիճների ապահովում՝ առնվազն 700 հատ:					
6	79951100/231	Արամ Խաչատրյանի անվան տուն-թանգարանում կազմակերպել համերգային ծրագիր երաժշտական և արվեստի դպրոցների սաների մասնակցությամբ և Ա. Խաչատրյանի ստեղծագործությունների կատարմամբ: Ծրագիրը պետք է նախապես մշակել և համաձայնեցնել պատվիրատուի հետ: Վերջինիս իրականացման համար անհրաժեշտ ձայնային, լուսային և մասնակիցների ելույթների համար անհրաժեշտ այլ սարքավորումների ապահովում: Արամ Խաչատրյանի անվան տուն-թանգարանից Կոմիտասի անվան քաղաքային պանթեոն և հակառակ ուղղությամբ երթուղով շուրջ 30 հոգի տեղափոխման համար տրանսպորտային միջոցի ապահովում: Մեկ ծաղկեպսակի և 60 հատ սպիտակ մեխակների ձեռք բերում:	դրամ		1	Ք. Երևան	մինչև հունիսի 6-ը
7	79951100/231	Կազմակերպել Երևան քաղաքի	դրամ		1	Ք.	մինչև

		երաժշտական և արվեստի դպրոցներում շնորհալի սաների, համույթների, երգչախմբերի, անհատ երգիչ կատարողների ստուգատես-մրցույթ՝ ըստ առանձին բաժինների, վերջինիս գնահատման նպատակով մասնագիտական խմբի ձևավորում: Յուրաքանչյուր բաժնի կամ անվանակարգի ստուգատեսը անցկացվում է մեկ օր, նախապես ընտրված և պատվիրատուի հետ համաձայնեցված դահլիճում, յուրաքանչյուր անվանակարգի ստուգատեսին անհրաժեշտ է ապահովել ձևավորված մասնագիտական խմբի ներկայությունը տվյալ անվանակարգին մասնակցող երեխաների գնահատման համար: Ստուգատեսն անցկացվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության կողմից հաստատված կարգի համապատասխան: Ա. Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիայի մեծ համերգասրահում կազմակերպել մեկ ժամ երեսուն րոպե տևողությամբ համերգային ծրագիր՝ անցկացրած ստուգատեսի արդյունքում ի հայտ եկած շնորհալի սաների մասնակցությամբ, ապահովել վերը նշված համերգասրահը 2 օրվա համար, առաջին օրը փորձեր անցկացնելու , երկրորդ օրը համերգային ծրագրի իրականացման նպատակով: Ստուգատես-մրցույթի անցկացման ընթացքում ի հայտ եկած լավագույն սաներ ներկայացնող առաջին երեք դպրոցներին յուրաքանչյուրին մեկական օրինակով պարգևատրել խորհրդանշական արծանիկներով: Վերջինիս իրականացման համար ըստ մասնակիցների ելույթների անհրաժեշտության ապահովել ձայնային և լուսային, այլ սարքավորումներով: Համերգասրահի բեմի դիմային հատվածը ձևավորել բնական ծաղկե շղթայով:				Երևան	հունիսի 30-ը
	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն						
8	79951100/232	2000 քմ գովազդային պաստառների տպագրություն և տեղադրում գովազդային վահանակներին, միջոցառումների բեմահարթակներին և այլ վայրերում: 1000գմ փուչիկներով ձևավորման ծառայություններ "Երևանյան Ամառ"	դրամ			Ք. Երևան	2018թ. Հունիսի 1-ից մինչև օգոստոսի 31-

		խորագրով 400 հատ, 0.9-2.1 չափի դրոշների և 50քմ պրոմո նյութերի տպագրության ծառայություններ: 20000 հատ Ա4 չափի բուկլետների տպագրություն և բաժանում: Կարապի լճում ֆիլմերի, համերգների ցուցադրման համար մետաղական հենքերով 35-40քմ էկրանի պատրաստում և տեղադրում, թեմատիկ ֆիլմերի ցուցադրում յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին:					ը

«Ազդ» ՍՊԸ-ն 17.03.2018թ. բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, որով վիճարկել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, մասնավորապես.

Բողոքաբերը նշել է, որ հրավերի տեխնիկական բնութագրից անհասկանալի է, թե նշված վայրի կոնկրետ որ հատվածում պետք է տեղադրվի բեմահարթակը: Օրինակ, 1-ին չափաբաժնի համար նշված է՝ Երևան քաղաքի փոքր կենտրոնի բանուկ հատվածների 3 հարթակներում՝ հատվածները համաձայնեցնելով պատվիրատուի հետ, 3-րդ չափաբաժին՝ Կասկադի հարակից («Գաֆեսճյան արվեստի կենտրոն») տարածքում, 4-րդ և 5-րդ չափաբաժիններ՝ Ազատության հրապարակում, 8-րդ չափաբաժնում՝ գովազդային պաստառների տպագրություն և տեղադրում գովազդային վահանակներին, միջոցառումների բեմահարթակներին և այլ վայրերում, Կարապի լճում: Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ պատվիրատուի կողմից բեմահարթակի հստակ տեղակայման վայրի մասին կատարողին ուշ տեղեկություն տրամադրելը (քանզի նշված չէ ոչ հստակ տեղակայման վայր, կամ վայրը բեմահարթակը տեղադրելուց առաջ տեղեկության ներկայացման ժամկետը) կարող է հարցականի տակ դնել պայմանագրի պատշաճ կատարումը:

Բողոքաբերի կողմից վերը նշված հիմքի վերաբերյալ Խորհուրդը գտնում է, որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի հրավերի տեխնիկական-բնութագիր գնման ժամանակացույցի մեջ ըստ համապատասխան չափաբաժինների արդեն իսկ մատնանշված են այն տարածքները, որտեղ նախատեսվում է կազմակերպել համապատասխան միջոցառումը, ինչ վերաբերում է նշված տարածքների կոնկրետ հատվածների մատնանշման բողոքաբերի պնդմանը, ապա Խորհուրդը գտնում է, որ

նման պնդումը հիմնավոր չէ, քանի որ տվյալ դեպքում հրավերի տեխնիկական բնութագիրը արդեն իսկ հնարավորություն է ընձեռնում հնարավոր մասնակիցներին տեղեկանալու միջոցառումների կազմակերպման տարածքների (վայրեր) մասին, իսկ նշված տարածքներում միջոցառումները կազմակերպելու հստակ հատվածների մատնանշումը նախապես տեխնիկական բնութագրով չի կարող դիտվել որպես էական նշանակություն ունեցող և պարտադիր, քանի որ պայմանագիրը կնքելուց հետո նշված հատվածների՝ պատվիրատուի հետ համաձայնեցնելու պահանջը որևէ կերպ չի սահմանափակում կամ խախտում մասնակցի իրավունքները:

Ինչ վերաբերում է պատվիրատուի կողմից բեմահարթակի հստակ տեղակայման վայրի մասին կատարողին տեղեկատվություն տրամադրելու ժամկետի վերաբերյալ բողոքաբերի նկատառմանը, ապա Խորհուրդը գտնում է, որ այն հիմնավոր է, քանի որ Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է նախատեսել այն ողջամիտ ժամկետը կամ ժամանակահավածը, որի ընթացքում Պատվիրատուն պետք է տեղեկացնի կատարողին պայմանագրով նախատեսված ծառայությունը սկսելու, այդ թվում՝ բողոքաբերի վկայակոչած՝ միջոցառումների բեմահարթակը տեղադրելու անհրաժեշտության վերաբերյալ: Հիշյալ դրույթի սահմանումը անհրաժեշտ է նաև կողմերի իրավունքները և պարտականությունները հստակեցնելու, կամայականությունը բացառելու, ինչպես նաև կատարողի՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը հետագայում գնահատելու համար:

«Ազդ» ՍՊԸ-ն բողոքով նշել է, որ հստակ նշված չէ, թե բեմահարթակ տեղադրելու թույլատվությունը ով պետք է ձեռք բերի, կատարողը, թե այն պետք է տրամադրվի պատվիրատուի կողմից և ինչ ժամկետում (օրինակ, Կասկադի հարակից («Գաֆեսճյան արվեստի կենտրոն») տարածքում):

Այս տեսանկյունից Խորհուրդն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի 20.03.2018թ. թիվ 02/61-19254Հ գրության, ինչպես նաև ԳԲԽ-ԱՄ-2018/42 բողոքով հրավիրված նիստի ժամանակ Երևանի քաղաքապետանի ներկայացուցիչների հայտնած դիրքորոշման համաձայն՝ հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված բեմահարթակը տեղադրելու համար թույլտվություն չի պահանջվում, ուստի Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով դրա վերաբերյալ որևէ

դրույթ չի նախատեսվել: Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ բեմահարթակը տեղադրելու թույլտվության վերաբերյալ վերը նշված դրույթը հրավերով նախատեսելու բողոքաբերի պնդումը հիմնավոր չէ:

Բողոքաբերը հայտնել է, որ տարակերպ մեկնաբանությունների տեղիք կարող է տալ, թե ինչ պետք է հասկանալ «հայտնի» երգիչ ասելով (3-րդ չափաբաժին), ինչ չափանիշով պետք է գնահատվի կատարողի հայտնի լինելու հանգամանքը (երգիչը կարող է լինել հայտնի մի զանգված ունկնդրի համար և ոչ հայտնի մեկ այլի համար):

Անդրադառնալով բողոքաբերի վերը նշված հիմքին, Խորհուրդը գտնում է, որ այն հիմնավոր է, քանի որ Մրցույթի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ նշված «հայտնի երգիչ» (3-րդ չափաբաժին) կամ «հայտնի ջազ խմբեր և անհատ կատարողներ» (4-րդ չափաբաժին) հասկացությունները սուբյեկտիվ են և կարող են տարակերպ մեկնաբանության տեղիք տալ, քանի որ առկա չէ հայտնի լինելու հանգամանքի գնահատման կոնկրետ չափանիշներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Խորհուրդը գտնում է, որ երգչի հայտնի լինելը կարող է տարբեր կերպ ընկալվել թե մասնակցի և թե պատվիրատուի կողմից, մինչդեռ Օրենքի պահանջն է հանդիսանում այն, որ գնման առարկայի նկարագրությունը պետք է բացառի տարակերպ մեկնաբանությունը: Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Մրցույթի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ նշված «հայտնի երգիչ» և «հայտնի ջազ խմբեր և անհատ կատարողներ» հասկացություններն անհրաժեշտ է հստակեցնել, թեև սահմանելով Պատվիրատուի տեսանկյունից հայտնի համարվող կատարողների մոտավոր ցանկ՝ դրա հնարավորության դեպքում, կամ նախատեսել այլ հստակեցնող չափորոշիչներ:

Բողոքաբերը նշել է, որ բացարձակ սուբյեկտիվ է տեխնիկական բնութագրերում ամրագրված հետևյալ արտահայտությունը՝ «մասնակիցների ցանկը և ելույթները անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ», քանզի նման ձևակերպման պայմաններում ցանկացած կատարող և ելույթ կարող են չընդունվել

պատվիրատուի կողմից՝ նման ոչ հստակ ձևակերպման պայմաններում, քանզի չկա պատվիրատուի համար ընդունելի կատարողների և կատարումների ցանկ, որով ղեկավարվելով՝ ծառայություն մատուցողը կարող է կազմակերպել միջոցառում: Բացի այդ, նման աբստրակտ ձևակերպման պայմաններում անհնարին կամ առնվազն դժվար է ներկայացնել ճիշտ հաշվարկված գնային առաջարկ:

Այս տեսանկյունից Խորհուրդը գտնում է, որ «մասնակիցների ցանկը և ելույթները անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ» հասկացությունը չի կարող դիտվել սուբյեկտիվ, քանի որ Խորհրդի կողմից արդեն իսկ վերը նշված՝ Պատվիրատուի համար նախընտրելի կատարողների որոշակիացված ցանկի հնարավոր նկարագրման պայմաններում յուրաքանչյուր միջոցառումից առաջ դրանց շրջանակից մասնակիցների և ելույթների՝ Պատվիրատուի հետ համաձայնեցնելու պահանջը Խորհուրդը համարում է ոչ խտրական, քանի որ բոլոր դեպքերում տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված յուրաքանչյուր միջոցառումից առաջ ծառայության մատուցման պայմանները հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նշված պայմանների շրջանակներում այնուամենայնիվ ենթակա է համաձայնեցման պատվիրատուի և մասնակցի միջև:

Այսպիսով՝ Խորհուրդը գտնում է, որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում վերոհիշյալ հիմնավորումների շրջանակներում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ և այն համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, ուստի Խորհուրդը գտնում է, որ «Ազդ» ՍՊԸ-ի բողոքը սույն որոշման մեջ նշված համապատասխան կետերով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ազդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 17.03.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝

պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել նշված մրցույթի հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով և այն համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**